



ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, քոր ինձ իմաստութիւն գրարիս խորիել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 121

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Աչքերս դէպի լեռները կը բարձրացնեմ,
ուրկէ օգնութիւն պիտի գայ ինձի:
Օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ,
որ արարիչն է երկինքին ու երկրին:
Անիկա թոյլ պիտի չտայ
որ փորձանքի մէջ իյնաս,
որովհետեւ քու անքուն Պահապանդ է ան:
Արդարեւ, ան չի՛ ննջեր եւ չի՛ քնանար,
իր ժողովուրդին Պահապանն է ան:
Տերը քու պահապանդ է,
քու հովանի պաշտպանդ է, կողքիդ կանգնած:
Ոչ ցերեկ արեւն արեգակը քեզի վնաս պիտի տայ,
ոչ ալ լուսինը՝ գիշեր արեւն:
Տերը ինք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ,
եւ քեզ պիտի պահպանէ:
Տունդ դուրս ըլլաւ թէ ներս՝
Տերը ինք քեզ պիտի պաշտպանէ,
այժմէն մինչեւ յաւիտեան:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՔԱՆ ՆԻԺՈՐ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

31 ԳԼՈՒԽ

ԻՍՐԱՅԷԼ ՏՈՒՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ (31:1-14)

Յաճախ երեխայի նման երբ բան մը կը խոստանանք անմիջապես կ'ուզեն որ կատարուի այդ խոստումը: Նոյն է պարագան նաեւ երբ Աստուած կը խոստանայ անմիջապես կ'ուզենք շուտով կատարուի այդ խոստումը: Նախորդող 30րդ գլուխը մեզի ներկայացուց Աստուծոյ հաւաքարիմ ըլլալու հանգամանքը, որ Աստուած հաւաքարիմ է Իր փրկած խոստումին: Հաւաքարիմ է, կը նշանակէ եթէ խոստացաւ, ուրեմն կը կատարէ, սակայն այդ կատարումը ժամանակ կ'ենթադրէ: Մեր դժուարութիւնը ժամանակ հասկացողութիւնն է, որ ամէն ինչին ժամանակը կայ:

Աստուած ոչ միայն կը խոստանայ, այլ այդ խոստումին կատարումին նախանշաններն ալ կու տայ, որպէսզի երբ կատարուի, իմանան որ Աստուծոյ փրկած խոստումն էր: Ահա այդ խոստումին կատարումին նշանները կը ներկայացնէ 31րդ գլուխը:

«**Իսրայէլի բոլոր ազգապոռնիներուն Աստուած պիտի ըլլամ, ու անոնք ինծի ժողովուրդ»** (1 հմր): Աստուծոյ մնայուն խոստումն է: Աստուած կ'ուզէ ժողովուրդին Աստուածը ըլլալ, անոր դիմաց ժողովուրդը՝ Աստուծոյ ժողովուրդը ըլլալու, այսինքն՝ հաւաքարիմ այդ կոչումին, հնազանդ Աստուծոյ պարտիքներուն: Երկրորդ, Աստուած կը խոստանայ բոլորին Աստուածը ըլլալու, ոչ միայն մէկ ազգի, այլ բոլոր ազգապոռնիներուն:

«**Սուրեն փախած ժողովուրդը անապատին մէջ շնորհք գտաւ, երբ Իսրայէլ կ'երթար հանգստութիւն գտնելու»** (2 հմր): Ակնարկութիւնը Եգիպտոսէն ելքն է, ուր 40 փարիներու ընթացքին, անապատային թափառումներուն անոնք կերակրուեցան մանանայով, խմեցին ապարածի ջուրէն, ու առաջնորդուեցան ամպի ու կրակի սիւնով, մինչեւ հասնին խոստացուած երկիր:

«**Քեզ յախտեան սիրով սիրեցի անոր համար շարունակեցի քեզ ողորմիլ»** (3 հմր): Հեղափոխական արքայապետութիւն մըն է, ուր ցոյց կու տայ Աստուծոյ ստորագրութիւնները եւ կը ստրկեցնէ Աստուծոյ գործելակերպը: Յովհաննէս Աւետարանիչ իր ընդհանրական նամակին մէջ կ'ըսէ. «Աստուած սէր է»: Երբ հարց կու փանք, թէ ինչո՞ւ արդեօք Աստուած կ'ողորմի, որովհետեւ Աստուած սէր է: Ահա այդ սէրն է, որ կը մղէ որ Աստուած ողորմի: Ողորմի մեզի՝ մեղաւորներուս:

«**Քեզ նորէն պիտի շինեմ»** (4րդ հմր): Տէրը կը խոստանայ բարգաւաճ կեանք: Յրուած ժողովուրդը անգամ մը եւս ի մի պիտի հաւաքէ, ինչպէս հովիւը իր հօքը (10րդ հմր): Ինչպէս Քրիստոս առիթով մը պիտի ըսէ. «Մարդու Որդին եկաւ կորսուած ոչխարը փնտռելու եւ գտնելու»: Անոնց սուգը ուրախութեան պիտի վերածէ, ու անոնք Աստուծոյ բարիքներով պիտի կշտանան (14րդ հմր): Պիտի լեցուին Աստուծոյ շնորհքովն ու ճշմարտութեամբը: Այս խոստումը ոչ միայն Իսրայէլին, այլ նաեւ հեթանոս աշխարհին:

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՒԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՀԱՆԴԷՊ (31:15-22)

Կարծէք հակասական է նախորդող հապտումը եւ այս մէկը, որովհետեւ այդ խոստումին դիմաց, յանկարծ ինչ է պատահածը: Խորքին մէջ կրկնութիւն է, թէ ինչպէս պատահած կոտորածին իբրեւ արքայապետութիւն Ռաբէլ իր փողոցը համար կու լայ: Այս նոյն հապտումը նաեւ Մարթեոս Աւետարանիչ կ'օգտագործէ երբ կը պատմէ Հերովդէսի կողմէ կատարուած ջարդը Քրիստոսի օրերուն: Ի միջի այլոց այսպէղ ակնարկուած դէպքը Իսրայէլի կոտորածն է Քաղղէացիներուն կողմէ:

Հակառակ այս երեւոյթին, Աստուած կը վստահեցնէ որ այս լացը, մանաւանդ եթէ ապաշխարութեան լաց է, պիտի դադրի ու անոր փոխարէն ուրախութիւն եւ յոյս կայ:

Ահա Աստուծոյ կոչը. «**Դարձիր, ով Իսրայէլի կոյս, քու քաղաքներդ դարձիր: Ով ապստամբ աղջիկ, մինչեւ ե՞րբ աստանդական պիտի շրջիս»** (22 հմր): Հեղափոխական է, որ եթէ երբեք նոյնիսկ Աստուած կը թոյլատրէ ու կ'արքայանայ որ Իր ժողովուրդը երկրէն դուրս գայ, բայց Աստուած երբեք Իր փեսայութենէն դուրս չի դնէր Իր ժողովուրդը, Իր մարքէն դուրս չի հանէր, այլ երբ յարմար պահը գայ ապաշխարութեան կոչ կ'ուղղէ, որպէսզի վերադառնայ Իրեն: «**Որովհետեւ Տէրը երկրի վրայ նոր բան ստեղծեց»** (22 հմր): Ինչ էր Աստուծոյ նոր բան ստեղծածը: Փրկութեան ծրագիրը, որ ահա կոյսը պիտի յղանայ եւ Որդի մը պիտի ծնի, ու Անոր Յիսուս պիտի դնէ, որ կը նշանակէ, Տէրը կը փրկէ, Տէրը պիտի փրկէ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ (31:23-40)

Ահա խոսարումին կապարման նշանները անգամ մը եւս այս հապուածով կը ներկայացուն: Անարդարութիւն եւ անսուրբ երկիրը պիտի ըլլայ արդարութեան բնակարան եւ սուրբ լեռ: Երբ վերադառնան, Տէրը պիտի օրհնէ, յոգնած հոգին պիտի զովացնէ, մարած հոգին պիտի կշտացնէ (23-25 հմբ): Ինչպէս Քրիստոս պիտի ըսէ երանելիներու ուսուցման ժամանակ. «Երանի ծարաւներուն եւ անօթիներուն, որոնք պիտի յագենան ու կշտանան» (Մտա 5:6, 11:28-29):

Ինչպէս Տէրը խլելու, փլցնելու կորսնցնելու ժամանակ հսկեց, շինելու, փնկելու ժամանակ ալ պիտի հսկէ (28 հմբ): Յետոյ անմիջապէս կը յստակեցնէ այն խօսքը, թէ «ամէն մարդ իր անօրէնութեան համար հաշիւ պիտի փայ» (30 հմբ), եւ ոչ թէ ինչպէս որ առակը կ'ըսէ. «**Հայրերը ազոխ կերան, որդիներուն ակռաները ցաւեցան**» (29 հմբ):

Ահա Աստուծոյ խոսարումը. «**Ահա օրեր կու գան, երբ Իսրայէլի փանը հետ ու Յուդայի փանը հետ Նոր Ուխտ պիտի ընեն**» (31 հմբ): Ի՞նչով նոր է այս ուխտը: Հին ուխտին նման քարեղէն փախստակներու վրայ չէ որ պիտի արձանագրուին Աստուծոյ օրէնքները, այլ անոնց ներսիդին, սրտին վրայ: Աստուածնաչափութիւնը պիտի շարնայ: Ոչ թէ ալ կարիքը պիտի չըլլայ սորվելու ու սորվեցնելու: Որովհետեւ Քրիստոս Ինք Իր աշակերտները դրկելով պիտի ըսէր. «Գացէք, եւ ինչ որ ես ձեզի սորվեցուցի նոյնը սորվեցուցէք» (Մտա 28:19): Ահա Աստուծոյ սիրոյ, ողորմութեան ու շնորհքի արտայայտութիւնը. «Անոնց անօրէնութիւնը պիտի ներեն, ու ալ չիշեն» (34 հմբ):

Ահա Աստուած կը թելադրէ, որ Իրեն համար նոր քաղաք պիտի շինուի, որուն չափերը եւ սահմանները Տէրը Ինք կու փայ, եւ այս չափերը ցոյց կու փան, թէ փակաւին այդ քաղաքը չէ շինուած, ու այնպիսի քաղաք մը, որ պիտի չքակուի եւ պիտի չփլչի յաւիտեան: Այդ քաղաքը Աստուծոյ սուրբ քաղաքն է, վերին Երուսաղէմը (38-40 հմբ):